ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 89

«25» 08 2020 թ. ք. Երևան

ԱՐՏՅՈՄ ԷԴԻԿԻ ՕՎՍՅԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Շիրակի մարզի դատախազի տեղակալ, արդարադատության առաջին դասի խորհրդական Արտյոմ Օվսյանը 2001 թվականից աշխատել է ՀՀ ոստիկանության տրանսպորտային վարչության Գյումրի քաղաքի գծային բաժնում՝ որպես օպերլիազոր, 2003 թվականից աշխատել է ՀՀ ոստիկանության ՔԳՎ Շիրակի մարզի քննչական բաժնում, ապա ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչությունում՝ զբաղեցնելով քննիչի, ավագ քննիչի, ՀԿԳ ավագ քննիչի և բաժանմունքի պետի պաշտոնները:

2017 թվականի մարտի 6-ին ՀՀ գլխավոր դատախազի թիվ 69-Ա հրամանով նշանակվել է Շիրակի մարզի դատախազության դատախազ, իսկ 2018 թվականի հուլիսի 30-ին՝ Շիրակի մարզի դատախազի տեղակալ և մինչ օրս աշխատում է այդ պաշտոնում:

Ա. Օվսյանը հսկողություն է իրականացրել կոռուպցիոն, ընդհանուր բնույթի և մարդու դեմ ուղղված հանցագործությունների դեպքերով նախապատրաստվող նյութերի, ինչպես նաև՝ քրեական գործերի մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ, այդ գործերով դատարաններում պաշտպանել է մեղադրանքը, ինչպես նաև իրականացրել է մարզի տարածքում պետական շահերի պաշտպանության դատախազական գործառույթը:

Պաշտոնավարման 3 տարի 5 ամիսների ընթացքում Ա. Օվսյանը դատավարական ղեկավարում է իրականացրել 269 քրեական գործերի նախաքննության նկատմամբ: Մեղադրական եզրակացությամբ դատարան է ուղարկել և դատարանում մեղադրանքը պաշտպանել է 82 քրեական գործերով: Հիշյալ գործերից 67-ով կայացվել են մեղադրական դատավճիռներ, 15 քրեական գործերով քննությունը սույն պահին դատարանում շարունակվում է: 3 քրեական

գործով վերացրել է վարույթը կասեցնելու մասին որոշումը: Բացի այդ, նախաքննական մարմնին տվել է 113 ցուցումներ:

Նշված ժամանակահատվածում Արտյոմ Օվսյանը հսկողություն է իրականացրել 637 նյութերի նախապատրաստման նկատմամբ, որոնցից 7-ով կայացրել է քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը վերացնելու և քրեական գործ հարուցելու մասին որոշում: Իր նախաձեռնության հանցագործության դեպքերի առթիվ հարուցել է 32 քրեական գործ, 14 քննիչների հեռացրել է քրեական դատավարությանը մասնակցելուց, ընդհանուր իրավասության դատարանի կայացրած տարբեր դատական ակտերի դեմ բերել է 6 վերաքննիչ բողոք: Բողոքներից 4-ը բավարարվել է, 2-ով բողոքը չի բավարարվել:

Ա. Օվսյանն իր դատախազական գործառույթներն իրականացնելու ընթացքում միջոցներ է ձեռնարկել՝ պետությանը պատճառված վնասները վերականգնելու ուղղությամբ, որը կազմել է 34.685.000 ՀՀ դրամ:

Նշված ժամանակահատվածում Արտյոմ Օվսյանը հանցանքի կատարմանը նպաստող հանգամանքները վերացնելու և ծառայողական քննություն անցկացնելու ընդհանուր 26 միջնորդագիր է ներկայացրել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների տարբեր հիմնարկների ղեկավարների: Հիշյալ բոլոր միջնորդագրերը քննարկվել են: Քննարկումների արդյունքում ոստիկանության 3 ծառայող, բժշկական հաստատության 5 աշխատակից և դպրոցի 11 տնօրեն ենթարկվել են կարգապահական տույժի, բացի այդ միջնորդագրերի հասցեատերերը միջոցներ են ձեռնարկել հանցանքի կատարմանը նպաստող հանգամանքները վերացնելու ուղղությամբ:

Դրանից բացի, նախորդ երեք տարիների ընթացքում Արտյոմ Օվսյանը պետական շահերի պաշտպանության վիճակի ուսումնասիրություն է կատարել պետական տարբեր գերատեսչությունների կազմում գործող ընդհանուր 152 հիմնարկներում: Կատարված ստուգումների արդյունքում հայտնաբերել են տարաբնույթ խախտումներ, որոնցից 2-ով ներկա պահին նախապատրաստվում են նյութեր, 3-ով սույն պահին կատարում է ուսումնասիրություն:

Արտյոմ Օվսյանը տիրապետում է հանցագործությունների քննության, քննչական գործողությունների կատարման, մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ դատախազական հսկողության, մեղադրանքի պաշտպանության մեթոդիկային և տակտիկային: Տիրապետում է բնագավառը կարգավորող օրենսդրությանը: Օժտված է կազմակերպչական անհրաժեշտ ունակություններով, պարբերաբար ուսումնասիրում է օրենսդրությունն ու մասնագիտական գրականությունը, պարտաճանաչ է, կարգապահ և վայելում է գործընկերների հարգանքը:

ՀՀ դատախազության համակարգում աշխատելու ժամանակահատվածում Արտյոմ Օվսյանը խրախուսվել է 2 անգամ, կարգապահական պատասխանատվության չի ենթարկվել:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Արտյոմ Օվսյանի անձնական և մասնագիտական բարձր որակները, ղեկավարվելով «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով, 37-րդ հոդվածով, 39-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 2-րդ մասի 2-րդ կետով և 4-րդ մասով, 50-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

Անցկացնել Շիրակի մարզի դատախազի տեղակալ Արտյոմ Էդիկի Օվսյանի արտահերթ ատեստավորում՝ վերջինիս «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված ծառայողական առաջխաղացման ցուցակում ընդգրկելու նպատակով:

Ա. ԴԱՎԹՅԱՆ